ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/535-2021 գրությամբ «Բլամմո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ վարչապետի աշխատակազմի 15.01.2021թ. թիվ 02/18.6/712-2021 գրության հիման վրա 19.01.2021թ. թիվ 26/26-1/535-2021 գրությամբ նախաձեռնել է «Բլամմո» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բլամմո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բլամմո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Բլամմո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/10 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ վարչապետի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.01.2021թ. թիվ 02/18.6/712-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:

Վերը նշված կարգավորման ուժով՝ տեսչական մարմնի կարիքների համար իրականացվող գնման գործընթացների պատվիրատու է հանդիսանում ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ):

ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից ներկայացված գնման հայտի հիման վրա Աշխատակազմը կազմակերպել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում 2020թ. հունիսի 29-ին Աշխատակազմի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագիրը: Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

Տեսչական մարմինը 2020 թվականի դեկտեմբերի 30-ին գրությամբ դիմել է Աշխատակազմին՝ իրազեկելով, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ չի մատակարարել պայմանագրի 2-րդ չափաբաժնով

նախատեսված «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը, և առաջարկել սահմանված կարգով մասնակի լուծել Պայմանագիրը: Հիմք ընդունելով վերոնշյալը, Աշխատակազմը միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ համապատասխան չափաբաժնի մասով:

Միաժամանակ, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N526-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 45-րդ կետի պահանջներով՝ կից ներկայացվում են հիմնավորող փաստաթղթերը՝ «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/10 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 29.06.2020թ. կնքվել է թիվ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքներն ու նյութերը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը:

3. ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված 30.12.2020թ. թիվ 01/06.2/4/7917-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տնտեսական ապրանքներ և նյութեր ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հունիսի 29-ին կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1» ծածկագրով պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում էր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը մատակարարել պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը (այսուհետ՝ Ապրանք):

Ընկերությանը սույն թվականի դեկտեմբերի 22-ին պատշաճ ձևով ծանուցվել է ապրանքի ժամկետի ավարտվելու վերաբերյալ, սակայն վերջինս պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարել:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ Ձեր հանձնարարականը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը՝ համապատասխան չափաբաժնի մասով պայմանագիրը միակողմանի լուծելու համար»:

4. Պատվիրատուն «Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 12.01.2021թ. թիվ 02/18.6/275-2021 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով 2020թ. հունիսի 29-ին Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բլամմո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է թիվ ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Ընկերությունը պարտավոր է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով տեսչական մարմնին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքներն ու նյութերը, սակայն նշված հավելվածով սահմանված 2-րդ չափաբաժնի՝ «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում չի մատակարարվել Ընկերության կողմից:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով տեսչական մարմնի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/06.2/4/7917-2020 գրությունը, որով վերջինիս կողմից փաստվում է այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. հունիսի 29-ին Ընկերության հետ կնքված N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից ստանձված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» հաստատելու մասին N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 12.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/535-2021 գրությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 15.01.2021թ. թիվ 02/18.6/712-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 29.06.2020թ. կնքվել է թիվ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքներն ու նյութերը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված 30.12.2020թ. թիվ 01/06.2/4/7917-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տնտեսական ապրանքներ և նյութեր ձեռքբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հունիսի 29-ին կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1» ծածկագրով պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում էր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը մատակարարել պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը (այսուհետ՝ Ապրանք):

Ընկերությանը սույն թվականի դեկտեմբերի 22-ին պատշաճ ձևով ծանուցվել է ապրանքի ժամկետի ավարտվելու վերաբերյալ, սակայն վերջինս պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարել:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ Ձեր հանձնարարականը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը՝ համապատասխան չափաբաժնի մասով պայմանագիրը միակողմանի լուծելու համար»:

Պատվիրատուն «Բլամմո» ՍՊԸ-ին ուղղված 12.01.2021թ. թիվ 02/18.6/275-2021 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով 2020թ. հունիսի 29-ին Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բլամմո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է թիվ ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Ընկերությունը պարտավոր է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով տեսչական մարմնին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքներն ու նյութերը, սակայն նշված հավելվածով սահմանված 2-րդ չափաբաժնի՝ «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում չի մատակարարվել Ընկերության կողմից:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով տեսչական մարմնի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/06.2/4/7917-2020 գրությունը, որով վերջինիս կողմից փաստվում է այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. հունիսի 29-ին Ընկերության հետ կնքված N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից ստանձված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» հաստատելու մասին N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 12.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «Բլամմո» ՍՊԸ-ն իր և ՀՀ վարչապետի աշխատակազմի միջև 29.06.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Բլամմո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/535-2020 գրությամբ «Բլամմո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բլամմո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**